

Ե. Հ. ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐԱՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱԿԱԽՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
ԱՐՏԱՑՈՒՄԸ ՍԻՐԻԱԶԱՅ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԱԶԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Սիրիահայ և լիբանանահայ գրողները որպես հայ ժողովրդի տարագրյալ բեկորների հույզերի, խոհերի և ապրումների արտահայտիչները, չէին կարող հեռու մնալ և հեռու չմնացին այն հիմնական հարցերից, որոնց արժարժումը ընդհանրական երևույթ էր ամբողջ սփյուռքահայ դրականության մեջ: Մեծ եղեռնը՝ իր հետևանքների աննկարագրելի ահավորությամբ հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա, բնազուրկ բազմաբյուր հայ գաղթականների կյանքը՝ առաջին շրջանում դժոխայնորեն նոր ու տարբեր պայմաններում, անապատի արհավիրքներից պրծած պատանիների այլասերումը օտար ոստանների մթնշաղում, — ահա հիմնական այն թեմաները, որոնք սկսված էին ամբողջ ըսփյուռքահայ, ուրեմն և սիրիահայ ու լիբանանահայ գրողների ստեղծագործական տեսադաշտում:

Բայց եթե և՛ եղեռնի, և՛ սփյուռքի նոր պայմաններում հայոց մնացորդացի ձուլման պրոցեսի, և՛ ընդհանրապես բնօրրանից հեռու հայ աշխատավորի սոսկական պայմանների նկարագրության հարցում Սիրիայի և Լիբանանի հայ գրողների թեմատիկան համընկնում էր ֆրանսահայ, ամերիկահայ և մյուս գրողների թեմատիկայի հետ, ապա առաջինների և վերջինների դրականությունն ուներ և որոշ առանձնահատուկ տարբերություն: Այդ այն էր, որ անցյալ ողբերգության պատումը նույն համապարփակ մթին ու ճնշիչ մթնոլորտով չէր տարվում և նոր կյանքն էլ նույնքան անհեռանկարայնորեն չէր ուրվագծվում արաբական Արևելքում, ինչպես Արևմտյան Ամերիկայում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Սիրիահայ և լիբանանահայ արձակի համար բնորոշ այդ առանձնահատկությունը, որ հետագայում բարենպաստ հող գտավ աճելու և նոր որակ դառնալու, և որ նկատելի էր ինչպես նախապատերազմյան զույգ տասնամյակներում, այնպես էլ երկրորդ աշխարհամարտին հաջորդող առաջին տարիներին, իր սկզբնաղբյուրն ուներ տեղահանության օրերին սիրիական անապատի արաբ քոչվոր ցեղախմբերի և վինադադարից հետո Սիրիայի և Լիբանանի քաղաքաբնակ արաբ զանգվածների՝ հայ գաղթականների նկատմամբ ջերմ ու եղբայրական վերաբերմունքի մեջ:

Որպես բնորոշ օրինակ կարելի է հիշատակել սիրիահայ տաղանդավոր արձակագիր Ս. Փանոսյանի «Որ մրրկավ էին զատված» վեպը¹, Գլխավոր հերոսը՝ Տիգրանակերտի ջարդից մաղապուրժ աղատված սլատանի Մուրադը, ապաստան է գտնում սիրիական անապատի վրանաբնակ արաբների մոտ: Բեղ-

¹ Ս. Փանոսյան, Որ մրրկավ էին զատված (վեպ), «Անի» ամսագրի (Բեյրութ) 1950—1952 թթ. համարներում և ապա առանձին հատորով՝ մատենաշար «Անի», № 5, Բեյրութ, 1953:

վիճակների ցեղախմբի պետը՝ Շեյխ Խալաֆը և նրա մարդիկ սիրում են Մուրադին իր ազնվության, վեհոգության և խիզախության համար: Հայ պատանին դառնում է Շեյխի աջ բազուկը և նրա մարդկանց ուռաջնորդում թուրք ժանդարմների հետ բախումների ժամանակ, փրկում տարագիր հայ կանանց ու երեխաների: Հետագայում Մուրադն ու մյուս հայերը բաժանվում են բեդվիճներից և գալիս Հալեպ, որտեղից էլ Մուրադի որդին հայրենադարձվում է:

Ինչպես իրավամբ նշվել է քննադատության կողմից², Ս. Փանոսյանի վեպում նկատելի է որոշ սխեմատիզմ, հատկապես վերջնագծում: Սակայն կարեւորն այս դեպքում ոչ այնքան գործի գրական բաղմամբիսի արժանիքները ինչ որ չափով մթագնող ստվերներն են, որքան այն՝ որ վեպը սիրիահայ և լիբանանահայ արձակի վերևում շեշտված առանձնահատկության խոսուն դրսևորումն է: Եվ այդ առանձնահատկությունը հասկանալիորեն հենվում է վեպում արծարծված հիմնական հարցի՝ հայ մնացորդացի ճակատագրի բարեհաջող լուծման զույգ հենարաններից առաջինի վրա: Այդ առաջին հենարանը արար ժողովրդի ազնիվ ասպնջականությունը, ավելի ճիշտ կլինե՞ր ասել՝ հայ և արար ժողովուրդների բարեկամությունն է ու դաշինքը, երկրորդը՝ մայր հայրենիք Սովետական Հայաստանի գրկում համախմբվելն է:

Բանն, անշուշտ, ոչ միայն նրանում էր, որ արար ժողովրդական զանգվածները, մի շարք դեպքերում նույնիսկ հակառակ իրենց իսկ պայմաններով բացատրվող որոշ «հետամնացության» և կրոնական «մոլեռանդության», արտակարգորեն մարդկային վերաբերմունք ցուցաբերեցին հայ գաղթականական իրերահաջորդ հոսանքների նկատմամբ, այլև ի տարբերություն արևմտավրոպական և անդրատլանտյան երկրներում հայ աշխատավորների համար ստեղծված անտանելի պայմանների, Սիրիայում և Լիբանանում հայ հասարակ մարդկանց համար դասավորվեցին որոշակի առանձնահատկություն ունեցող պայմաններ:

Եվ իրոք, Ֆրանսիայում կամ ԱՄՆ-ում տեղական խոշոր ու միջակ կապիտալիստները, տեղական պրոլետարիատի կազմակերպվածության ու մարտունակության հետեանքով, իրենց շահագործողական մոլուցքի հազարումեկ հնարանքները ի գործ էին դնում՝ հայ (և ոչ միայն հայ) գաղթականներին ոչ-լիիրավ քաղաքացիներ պահելով, որպես «ենթաբանվոր» օգտագործելու և նրանցից առավելագույն օգուտը քաղելուց հետո փողոց շարտելու համար: Մինչդեռ Սիրիայում և Լիբանանում, որպես ֆրանսիական մանդատի անմիջական հետեւիվանք, օտար արյունախում կապիտալի անողորմ գերակայության և անսահմանափակ շահագործողական պայմաններում, իր իսկ շուկայում թևաբեկ արար գործատերը և իր իսկ հայրենիքում «ենթաբանվոր» արաբ աշխատավորը հանձին հայ գաղթականի տեսնում էին իրենց ճակատագրակից հարազատ եղբոր:

Այդ առանձնահատկությունը ևս չէր կարող տարբերիլ ինչ որ երակ շրջագծել սիրիահայ և լիբանանահայ գրականության օրգանիզմում, ինչքան էլ այն անբաժան մի մասը լինե՞ր սփյուռքահայ գրականության ավելի մեծ օրգանիզմին³:

2 Մ. Բարլոյան, Սփյուռքահայ մամուլի պատմությունից՝ «Անի», Երևան, 1965, էջ 76—82:

3 Որպես բնորոշ օրինակ կարելի է հիշատակել Մ. Տեր-Ստեփանյանի «Փախ փախը՝ մահվան առջև» պատմվածքը («Անի» ամսագիր, Երևան, 1947, № 3, էջ 126):

Կարևորությունից զուրկ չի լինի մատնանշել, որ և՛ եղեռնի դժոխային տարիների, և՛ գաղթականության առաջին ժամանակաշրջանի պատկերման ասպարեզում սփյուռքահայ ընդհանուր գրականությունից նրա սիրիահայ և լիբանանահայ թևը տարբերակող առանձնահատկությունը հաստատելի էր միայն ու միայն առաջադեմ գրողների երկերում: Այս, ինչպես բոլոր մնացյալ հարցերում, հետադեմ գրողների գործերը, սփյուռքի ամբողջ տարածքում, մթագնված էին միևնույն եղբրամայրական լացակումածությամբ, միատեսակ հոռետեսությունամբ, կյանքի ընդհանրական անհեռանկարայնությամբ: Ինչ վերաբերում է առանձնապես սիրիահայ և լիբանանահայ հետադեմ գրողներին, ապա նրանք՝ անգամ այն դեպքում, երբ հայրենադարձության առաջացրած խանդավառ ալիքին հարկադրաբար հարկատու, գաղութահայությանն ճակատագրի բարեդեպ լուծումը հայրենիք վերադարձի մեջ էին մատնանշում, ոչ միայն չէին ընդունում հայ և արաբ ժողովուրդների բարեկամության և հայրենադարձության իրար լրացնելու, իրարով ամբողջացվելու հանգամանքը, այլև դրանք հակադրում էին իրար և Մերձավոր Արևելքից հայրենադարձության անհրաժեշտությունը բխեցնում արաբ ժողովրդի՝ հայերի նկատմամբ ցնորածին ինչ որ թշնամանքից:

Արաբ ժողովրդական զանգվածների հետ բարեկամությունը, հայրենադարձության հետ միաժամանակ, Մերձավոր-արևելյան առաջադեմ հայ գրողների համար ոչ միայն հիմնական նախապայմաններից մեկը եղավ սփյուռքահայության փրկության նշանաբանով մղվող պայքարի հաղթական ավարտի մեջ, այլև հիսունական թվականների սկզբից թևակոխեց զարգացման մի նոր փուլ, որը կապված էր ընդհանրապես արաբական աշխարհում և մասնավորապես Սիրիայում և Լիբանանում ստեղծված քաղաքական իրադրության հետ:

Արդարև, հիսունական թվականներին անդլո-ամերիկյան իմպերիալիզմը սկսեց Սիրիան և Լիբանանը ևս իր ռազմաստրատեգիական ագրեսիվ պլանների դիակառքին լծելու փորձերն ուժեղացնել, միաժամանակ աշխուժացնելով այդ երկրներում իր տնտեսական գրոհը՝ տեղական արդյունաբերության և աշխատավոր զանգվածների համար դրա հեղձուցիչ բոլոր հետևանքներով հանդերձ: Սիրիայի և Լիբանանի ժողովրդական լայն զանգվածները, հակառակ կառավարող հետադեմ շրջանների կամքին՝ դեմոկրատական հոսանքների առաջնորդությամբ, բացահայտ պայքարի դուրս եկան միջազգային իմպերիալիզմի քաղաքական և տնտեսական մեքենայությունների դեմ:

Սիրիայի և Լիբանանի պետական անկախության ամրապնդման և տնտեսական ինքնուրույնության ձեռք բերման համար մղվող պայքարի այդ ժամանակաշրջանում, հայ-արաբական բարեկամությունը ստացավ նոր որակ: Եվ այդ նոր որակում էլ, հատկապես հիսունական թվականների երկրորդ կեսից, դադարելով սիրիահայ և լիբանանահայ գրականության սոսկ առանձնահատուկ ինչ որ երանգ դրոշմելու բնույթն ունենալուց, դարձավ այդ գրականության հետագա ընթացքի վրա կարևոր ներգործություն ունեցող ակնառու ազդակ:

Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներում, հայության տարբեր խավերի, և ուրեմն՝ մի կողմից կոմունիստ. հնչակյան, ռամկավար և այլ հայրենասեր, ու մյուս կողմից դաշնակցական մտավորականության միջև գնում էր բուռն բախում՝ արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին և հակաիմպերիալիստական մարտերին հայերի մասնակցության հարցում:

Դաշնակ գրողները, չկարողանալով հայերին արաբների ազգային ձգտումների դեմ դուրս գալու բացահայտ քարոզ կարգալ, բոլոր հնարքներով անում էին արաբական աշխարհի հայ գաղթօջախներին առնվազն «չեզոքություն» պարտագրել հակաիմպերիալիստական պայքարում: «Չեզոքության» քարոզը, որը դաշնակ մամուլի էջերում շրջում էր գաղութից գաղութ, հետագեմ գրողների գրչի ներքո արաբական Արևելքում բյուրեղանում և որպես «ստեղծագործություն» մատուցվում էր սփյուռքահայությանը: «Հայը ինքն իր համար»⁴. ահա մի հանկերգ, որը դաշնակ գրողները փորձում էին որպես ազգային դավանանք փաթաթել հայ գաղթօջախների վզին: Այդ ախտաժեռ դավանանքին, առաջագեմ հայ գրողները հակադրում էին իրենց առողջ և հպարտ հնչող նոր կարգախոսը. «Մենք բոլորս»⁵, իսկ այդ «Ես՝ եմ, Օննի՛կը, Արփի՛կն է, Իպրահի՛մը, Նատիա՛ն, մե՛նք ենք», պաղեստինցի արաբ գաղթականն ու դժբախտ հայ վարսավիրը, կյանքի բեռան տակ թառամող արաբուհին և նրա ճակատագրակից հայ աղջիկը, մի պատառ չոր հացի միկնուլյն մորմոքով տվալտող աղաք իլիասն ու հայ Մարգարյանը⁶, ուսման ծարավի այլ ընչազուրկ ծնողներից սերված լինելու պատճառով լույսից հեռացվող Ալին, խալիլն ու Վազգենը⁷, փշաքած շրջապատում կորստյան դուռն հասած այլ գեղեցիկ երազներ ունեցող մանկահասակ Աբդոն, Ֆարեսը, Ժոզեֆը, Սարգիսն ու Մանասը⁸:

Հիսունական թվականները, հատկապես այդ տասնամյակի երկրորդ կեսը, ինչպես արաբական Արևելքի ժողովուրդների, այնպես էլ Սիրիայում և Լիբանանում ապրող քառորդ միլիոն հայության համար բնորոշ է նրանով, որ շտեմանը ված չափերով շեշտվեց հակաիմպերիալիստական պայքարի վճռականությունը: Այդ վճռականության հողի վրա էլ հենց այս ժամանակահատվածում անօրինակ աշխուժություն ստացավ հայ-արաբական միասնությունը՝ ընդգեմ արաբ ժողովուրդները ստրկացնելու գործում ազգային այլ փոքրամասնությունների շարքում հայերին ևս օգտագործել ցնորող օտար ուժերի և նրանց ներքին կամակատարների:

Սիրիայի և Լիբանանի հայ գաղթօջախների համար, բառիս իսկական առումով աննախընթաց հայ-արաբական այդ միասնությունը ունեցավ ազգային-քաղաքական շատ խոշոր նշանակություն, մի բան՝ որը բավականաչափ լուսաբանվել է մամուլում և առանձին աշխատություններում: Այդ միասնությունը, սակայն, խոշոր նշանակություն ունեցավ նաև Սիրիայի ու Լիբանանի հայ գրականության համար ընդհանրապես և հայ-արաբական մտավոր-մշակութային կապերի հունավորման համար մասնավորապես: Եվ այդ որպես տրամաբանական հետևանքը այն բանի, որ այդ միասնության կռման գործում առաջնային դեր ունեցավ Սիրիայի և Լիբանանի հայ առաջագեմ մտավորականությունը և առաջին հերթին գրական առաջավոր նոր սերունդը, սերունդ, որը իր

⁴ Ե. Դ. Պոյաճյան, Հայը («Բազին», Ա տարի, № 3, էջ 1—8):

⁵ Ա. Դարյան, Մենք բոլորս (մատենաշար «Շարժում», № 1, ժողովածու գրականության և արվեստի, Բեյրութ, 1950, էջ 11—26):

⁶ Ա. Դարյան, Շարժավարները (մատենաշար «Շարժում», № 3, ժողովածու գրականության և արվեստի, Բեյրութ, 1951, էջ 7—19):

⁷ Ա. Դարյան, Սկիզբ մը... (մատենաշար «Շարժում», № 6, ժողովածու գրականության և արվեստի, Բեյրութ, 1951, էջ 5—34):

⁸ Ս. Ազատյան, Էվերեսթ... պուզա (մատենաշար «Շարժում», № 10, ժողովածու գրականության և արվեստի, Բեյրութ, 1952, էջ 38—48):

առաջնորդողի առաքելության սմբողջ իմաստը տեսավ հայ աշխատավոր զանգվածները ավելի գործունե կերպով դեպի արաբների հակաիմպերիալիստական պայքարի ոլորտը ներթափելու մեջ:

Դեռ հիսունական թվականների ամբողջ առաջին կեսին, նորանկախ Սիրիան և Լիբանանը իր նոր տիպի գաղութականացման ենթարկելու և որպես ազմախարիսխ օգտագործելու հեռանկարով, ամերիկյան իմպերիալիզմը ակտիվացրել էր այդ երկրներում իր «հոգևոր» գործակալությունները: Վերջիններս, հանդես բերելով լկտի կոսմոպոլիտիզմ, մշակութային բոլոր ասպարեզներում ժամանակավրեպ էին հռչակում ազգային ոգին ու ավանդությունները, ժողովրդական պայքարի հերոսական տրագիդիաները, և գովերգում արևմտյան, հատկապես ամերիկյան կենցաղն ու մշակույթը, դրանք վարագուրելով «արդիական»-ի դիմակի ներքո: Միաժամանակ, նրանք պատերազմը մարդկային բնազդների արդյունք և ուրեմն խաղաղությունը ցնորական երազանք հռչակելով, փորձում էին սիրիացիներին և Լիբանանցիներին թմբեցնել այսպիսի քարոզներով. «Մենք հետամնացներ ենք և չենք կարող մրցիլ արևմտյան քաղաքակրթության հետ, մենք տկարներ ենք և չենք կրնար դիմադրել ամերիկյան, անգլիական և ֆրանսիական ներխուժումին»:

Իմպերիալիզմի տեղական ծառաների ծուներ հրետանու աշխատանքը զգալի էր առավելապես գրականության ճակատում: «Ալ սաքաֆե ալ ութանիե» ամսագիրը 1958 թ. իր առաջնորդողներից մեկում, որը կրում էր «Վտանգի մեջ է մեր մշակույթը» պերճախոս խորագիրը, իրավամբ շեշտում էր, որ «ամերիկյան մշակութային ներթափանցման» միջոցով Լիբանանյան գրականությունն ու գրողներին այլասերելու եռանդազին աշխատանք էր տարվում որոշ շրջանակների կողմից, գլխավորությամբ «ֆրանկլինյան հաստատության»¹⁰, որին ավելի հետո թևարկության հասավ «Մշակութային ազատության միջազգային կազմակերպությունը», Լիբանանում հիմնադրելով հատուկ մասնաճյուղ և լույս ընծայելով «Հիուար» ամսագիրը¹¹:

Իմպերիալիզմի աշխուժացող «հոգևոր» գործակալությունների ճակատում իրենց ուրույն տեղով և դերով աչքի էին դարձնում նաև Սիրիայի և Լիբանանի դաշնակ գրողները: Արաբ ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի հաջողություններից և այդ պայքարում Սիրիայի և Լիբանանի հայ գաղթօջախների ունեցած կարևոր դերից գազազած, հայ հետադեմ գրական գործիչները մեկը մյուսի հետևից հրապարակ նետեցին նոր օրգաններ: Դաշնակ գրողները ամեն կերպ աշխատում էին բանաստեղծականացնել համաշխարհային իմպերիալիզմի միջնաբերդը և Սիրիայի ու Լիբանանի հայ գաղթօջախները կողմնորոշել դեպի ԱՄՆ, նրանց կտրելով այդ երկրների արաբ մասսաներից և նույնիսկ հակադրելով արաբներին¹²:

Սիրիայի և Լիբանանի առաջադեմ արաբ մտավորականությունը անհաշտ և անդադրում կռիվ հայտարարեց ամերիկյան իմպերիալիզմի տեղական քարո-

⁹ Դամասկոսի «Սալամա» թերթի առաջնորդողից, Մեջբերումը ըստ «Ժողովածու»-ի, Բեյրութ, 1951, № 7, էջ 96:

¹⁰ «الثقافة الوطنية» (مجلة ثقافية)، بيروت ١٩٥٨، العدد ٥٥

¹¹ «Հառաջ գրական», 1963, հունվար, էջ 9:

¹² Տե՛ս նաև Պոյաճյանի «Հողը» պատմվածքների ժողովածուն (Բեյրութ, 1952), Մ. Պերպերյանի «Լիբանանյան լեռան տուն» («Հայրենիք» ամսագիր, 1953, № 6) և այլն:

գիշ «կոսմոպոլիտների» ստվարացող և աշխուժացող բազմության դեմ, Դամասկոսում և Բեյրութում իրար հետևից հրապարակ իջան բազմաթիվ գրական-գեղարվեստական հանդեսներ, որոնք «Ալ թարիք» ամսագրի հետ մարտական կուռ ճակատով ձեռնամուխ եղան գրական նոր սերունդը և նրա հետ արաբ հասարակայնության լայն խավերը ախտավոր շնչից հեռու պահելու գործին: Այդ նոր հանդեսների գլխավորն էր «Ալ սաքաֆե ալ ուաթանիե» ամսագիրը, որ իր առաջնորդողներից մեկում գրում էր. «Արաբական աշխարհի շորս ծագերում սըրված է պայքարը իմպերիալիզմի դեմ: Արաբ ժողովուրդները ճանաչել են իրենց մեծագույն թշնամուն՝ իմպերիալիզմին: Այդ պայքարից է ծնունդ առել մեր մարտնչող գրականությունը: Մեր նոր գրականությունը արտահայտում է մեր ժողովուրդների ատելությունը իմպերիալիզմի հանդեպ, տալիս է այդ ատելության պատճառները և պատկերում մեր մարտական մեծ տրագիցիաները: Եվ այս բոլորի շնորհիվ՝ առաջագիմական և նոր մեր գրականությունը արձանագրում է աննախընթաց ծաղկում՝ ի շահ արաբ մեր ժողովուրդների»¹³:

Եվ ահա իրենց արաբ գրչեղբայրների, իրենց մարտիարաբ ընկերների հետ միաժամանակ, ասպարեզ նետվեցին և մի խումբ առաջադեմ հայ գրողներ ու մտավորականներ, որոնք իրենց գրական մկրտությունն ստանալուց հետո «Անի»-ում¹⁴, «Մշակույթ» գրական-հասարակական պարբերականով արաբական աշխարհում իմպերիալիզմի դեմ նախապատրաստվող վճռական մարտերին զորակոչեցին հայ մասսաները: Եվ երբ լիբանանյան գրաքննական արգելքների դեմ երկարատև խուսանավումներից հետո իշխանությունների հրամանով 1956 թ. աշնանը փակվեց «Մշակույթ»-ը, բնավ էլ ոչ-պատահաբար ասպարեզ իջան «Ծրկիր» ամսագիրը Հալեպում (1956 դեկտեմբեր), «Մեր նշանաբանն է հառաջ» շաբաթաթերթը և «Արարատ գրական» ամսագիրը Բեյրութում (1957 հունվար): Իրենց նոր օրգաններում, Սիրիայի և Լիբանանի հայ գեմեկրատական գրական հոսանքի երիտասարդները իրենց ստեղծագործական աշխատանքը կենտրոնացրեցին սփյուռքահայ պայմանների համար բացարձակապես նոր ուղղություններով: Նրանց գեղարվեստական վաստակն էլ իր բովանդակությամբ, ըստ էության, նոր որակ հանդիսացավ սփյուռքահայ գրականության մեջ: Իմպերիալիզմի գիշատիչ էության գեղարվեստական բացահայտում, իմպերիալիզմի դեմ արաբ ժողովուրդների պայքարի չատագովում և նրա հաղթական ավարտի նկատմամբ հավատք, մանավանդ Սիրիայի և Լիբանանի հայ մասսաներին՝ այդ պայքարում ներգրավելու, և իմպերիալիզմի տեղական ծառաների՝ արաբ և հայ բուրժուազիայի դեմ համերաշխ ելույթների անհրաժեշտության հիմնավորում. ահա մի քանիսը այն նշանակալից մոմենտներից, որոնցով բնորոշվում է հիսունական թվականների Սիրիայի և Լիբանանի հայ գրական հիմնական հոսանքի ուղղությունը:

Արաբ ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարին հայ գաղթօջախների մասնակցության ակտիվացման ուղղությամբ հայ առաջադեմ մտավորականության ամենօրյա աշխատանքը շէր կարող շնչառությամբ հետպատերազմյան մերձարևելյան հայ գրականության ուշագրավ երևույթներից մեկը: Այդ՝ արաբների հակաիմպերիալիստական պայքարի և այդ պայքարի արաբ

¹³ «الثقافة الوطنية» بيروت ١٩٥٥ العدد ١

¹⁴ «Անի», գրական-գեղարվեստական ամսագիր, Բեյրութ, 1946—1955, խմբագիր՝ Վահե Վահյան:

հերոսների թափանցումն էր սիրիահայ և լիբանանահայ գրողների արձակ գործերի մեջ:

Սկզբնական շրջանում, արաբական նոր պատմվածքի ազդեցության ներքո, որտեղ աստիճանաբար առանցքային հերոսը սկսել էին դառնալ հետզհետե դասակարգային գիտակցություն ձեռք բերող արաբ պրոլետարիատն ու ֆելլահներ, Ա. Դարյանը տվեց հայ և արաբ բանվորների դասակարգային եղբայրությունը և ճակատադրակցությունը, հայ և արաբ ուսանող երիտասարդության կյանքի դժվարությունների համանմանությունը շեշտող մի շարք պատմվածքներ («Շարժավարները», «Սկիզբ մը» և այլն): Նրան հետևեց Ս. Վահագնը, իր պատմվածքներում («Շատերեն մեկը», «Հատուցում», «Հացի և վարդի համար», «Հասարակ պատմություն» և այլն) բարձրացնելով աշխատանքային տանելի պայմանների, մարդկային կյանքի ու խաղաղ գոյության համար իրենց կռվում հայ և արաբ բանվորների դաշինքի անհրաժեշտության հարցը: Հ. Գանգրունին («Անկարելի երազ») և Եր. Գարաձյանը («Անմար սեր») իրենց ուշադրությունը սևեռեցին հայ և արաբ երիտասարդների ազատ սիրո ձանապարհին ազգային պատենշների խորտակիչ հանգամանքի վրա:

Առավել ուշագրավ հաջողությամբ և ավելի ուժեղ տաղանդով երևույթը խորացրեց Գ. Լ. Սևանը, որ իր «Գիշերապահը», «Մոտենոն հեքիաթ», «Հալիմ էլ Մըսրի», «Բարի լույս, Սլեյման» և ուրիշ պատմվածքներում միայն ու միայն արաբ պարզ մարդկանց դժվարին առօրյան, գիտակցական աստիճանական զարթոնքը, պայքարն ու անկումները դարձրեց իր արձակի թեման:

1955 թ. վերջում Հորդանանի հուզումների, 1956 թ. առաջին կեսին անգլիական զորքերից Եգիպտոսի ամբողջական պարպման համար պայքարի, Սուեզի ջրանցքի ազգայնացման և Եգիպտոսի վրա 1956 թ. աշնան իմպերիալիստական նախահարձակման պայմաններում արաբ ժողովուրդների և իմպերիալիզմի ճակատ-ճակատի վճռական գոտեմարտի սկսումով, Սիրիայի և Լիբանանի հայկական արձակում արաբ մարտնչող հեղափոխականի կերպարը գտավ բաց դռներ և իր ամբողջ վեհությունը այնտեղ դարձավ առանցքային կերպար: Այդպիսի հեղափոխականներ էին Հորդանանում զոհված հերոսուհի Ռաժա Հասանը¹⁵, Դամասկոսում հերոսացած Ռուշդիան¹⁶, Լիբանանում պատենշի վրա ընկած Յասիմ Աբուհայդարը¹⁷ և ամերիկյան ինտերվենտների դեմ կռվող Սելիմը¹⁸, անգլո-ֆրանսիական ագրեսորների դեմ Պորտ-Սաիդում մարտնչող Ռաշիդը¹⁹ և շատ ուրիշներ:

«Պոռթկումներու, կյանքին և գրականության այլազան մարզերուն մեջ գիտակցական պոռթկումներու շրջան մըն է, որ կապրինք, — գրել է Գ. Լ. Սևանը հենց այդ ուշագրավ երևույթին ակնարկելով: — Եվ այս բոլորը արդյունք ստեղծված նորագույն ժամանակներու պահանջին: Կաճի գիտակցական մակարդակը ժողովուրդներուն և հաջողութենե հաջողություն կրննանա արաբական ազգային դատը: Կարիք կա նոր խոսքի: Երգի ու վրականության: Կարիք կա, ավելին՝ պահանջք կա: Եվ այս այսպես է մեզի՝ հայերուս համար ալ: Կապրինք

¹⁵ Գ. Լ. Սևան, Ռաժա Հասան («Գիրք գրականության և արվեստի», Բեյրութ, 1956, ապրիլ):

¹⁶ Հ. Գանգրունի, Ռուշդիա («Արարատ գրական», 1958, № 3):

¹⁷ Լ. Գ. Զանգու, Անունը գրեթե Հրրիկ («Հառաջ», 27—7—1958):

¹⁸ Նույնի «Հառադակաց թղթամիտ» (նույն տեղում, 10—8—1958):

¹⁹ Խ. Արապյան, Այրվող Բուր Պայիտի մեջ («Երկիր», 1957, մայիս):

արաբական երկրներուն մեջ. ըլլալով հարազատ քաղաքացիները արաբական երկրներուն, չենք կրնար չազդվիլ և նույն պահանջքը չզգալ մենք ևս»²⁰:

Գիտակցական այդ պոռթկման որպէս արդյունք, այդ նոր պահանջքին որպէս պատասխան, Սիրիայի և Լիբանանի առաջագեմ հայ գրողները արաբ աշխարհի համար բախտորոշ ամեն մի իրադրութեան ժամանակ ունեցան իրենց խոսքը:

1956 թ. աշնանը անգլո-ֆրանսիական իմպերիալիստները և նրանց կամակատար իսրայելյան ռազմամուկները նենգ նախահարձակման ենթարկեցին Եգիպտոսը: Եգիպտացի ժողովուրդը զեն ի ձեռին հերոսաբար պաշտպանեց իր հայրենի հողը: Ամբողջ առաջագեմ մարդկութիւնը ոտքի կանգնեց՝ պաշտպանելու արաբների խաղաղ կյանքի ու աշխատանքի իրավունքը: Եգիպտական ժողովրդի հակաիմպերիալիստական արյունահեղ պայքարին իրենց միասնութիւնը հայտնող Լիբանանուհայ և սիրիահայ աշխատավորների խոհերի և տրամադրութիւնների լավագույն թարգմանը հանդիսացան առաջագեմ երիտասարդ գրողները, չվարանելով իրենց օրգաններում անհաշտ պայքարի, ի հարկին՝ զինված պայքարի հրավեր կարդալ հայ գաղթօջախներին: Նրանք իրենց խոսքը անգլո-ֆրանսիական «Մահվան գիշեր» բերող նախահարձակներին ուղղելով, գրում էին, որ Սիրիան ու Եգիպտոսը, ամբողջ արաբական Արևելքը դադարել են հյուրընկալ հող լինելուց և դարձել հարազատ հայրենի աշխարհ, հայրենի հարազատ տուն, որի համար նրանք պատրաստ են անհղ կովի դուրս գալ օտար ներխուժողների դեմ և փորել նրանց գերեզմանը²¹: Դեռ իր գրական նախաքայլերն անող Հ. Ադամյանը, Բեյրութից ձայնակցելով հալեպցի իր գրչեղբայր Ժ. Հաճյանին, իմպերիալիզմի դեմ մարտնչող «արաբական աշխարհին» վստահեցնում էր. «Պատրաստ զինվորդ եմ այսօր և բազուկդ շինարար»²²: Ն. Շահենը, իր «ատելութեան խոսքը» ուղղելով խաղաղութեան երդվյալ թշնամիներին, դրվատում էր հայ ժողովրդի խաղաղասիրութիւնն ու կենսասիրութիւնը, բայց և միաժամանակ ընդգծում նրա վճռականութիւնը՝ ոչ մի զիջում չանելու բռնի ուժով և անմարդկային ուժիւրներով իրենց իմպերիալիստական ախորժակներին հագուրդ տալ փորձողների նկատմամբ²³: Գ. Ադդարյանը արաբ քերթողուհի Ռաժա Աբդելուասուլին ուղղած իր նամակ-քերթվածում հավաստիացնում էր, որ «խորշակին դեմ խելագար» հայը կանգնած է իր եղբոր՝ ազատասեր արաբի կողքին²⁴:

Եգիպտոսի ժողովրդի մարտը՝ արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարի առաջին հաղթական հանգրվանն էր լոկ: Շուտով ամերիկյան իմպերիալիզմը սկսեց թուրքական և իսրայելյան նախահարձակում նախապատրաստել Սիրիայի դեմ: Դեմոկրատ երիտասարդ բանաստեղծները ոտքի կանգնեցին այդ սպառնալիքի դեմ: Իմպերիալիստների ագրեսիան վիժեցնելու գործում արաբ ժողովուրդների (և նրանց հետ հայ գաղթօջախների) միասնութիւնը որպէս «Արևելքի արթուն պահակ» էր ողջունում երիտասարդ Մոմճյանը²⁵: Մ. Գուշագճյանը շեշտում էր, որ հայ ժողովրդի սիրիահայ բեկորները,

20 «Մեր նշանաբանն է հառաջ», Բեյրութ, 13—1—1957, էջ 6:

21 Ժ. Հաճյան, Հնրոսական («Երկիր», 1956 զեկտեմբեր, էջ 29):

22 Մ. Ադամյան, Արաբական աշխարհին («Արարատ գրական», 1957, № 7, էջ 26):

23 Ն. Շահեն, խոսք ատելութեան («Երկիր», 1956 զեկտեմբեր, էջ 57):

24 «Գիրք գրականութեան և արվեստի», 1956 հոկտեմբեր, էջ 31—32:

25 Մ. Մոմճյան, Ողջուն քեզ («Արարատ գրական», 1958, № 2, էջ 19):

«հարազատ մայրական երգիք» դարձած Սիրիահայ վառ արևի համար» պատ-
րաստ են իրենց «կյանքն իսկ անտրտուն» տալու²⁶։ Սիրիահայերի այդ վերա-
բերմունքն էր դրվատում Թ. Թորանյանը գրելով. «ամերիկյան և թուրքական դա-
վադիրների դեմ «իմ ժողովուրդ, ելար և դուն, Հունանն ինչպես ֆաշիզմի դեմ»²⁷։
Սիրիահայ տաղանդավոր գրող Սմբատ Փանոսյանը, «Սուրիան դյուրավ կլվե-
լիք պատառ չէ» խորագրով մարտական հոդվածում, դրվատելով սիրիահայ աշ-
խատավորների բազմահազարանոց բանակի մասնակցությունը երկրի պաշտ-
պանության, հաստատ հավատք էր հայտնում, որ «Արևմտյան գաղթապետու-
թյունը կրկեսային ցուլի անգոր և հուսահատական մոնշյուններով չի կրնար
վախ ազդել այլևս Միջին Արևելքի ազատագրված ժողովուրդներուն։ Եվ օր մը,
մոտալուտ օր մը անոր վտանգավոր եղջյուրները պիտի ջախջախվին ազատա-
տենչ ժողովուրդներու հերոսական պարիսպներուն առջև»²⁸։

Իմպերիալիզմի գազազած ցուլը ոչ միայն իր սպառնալից կոտորները ջար-
դեց Եգիպտոսի և Սիրիայի պատենշների վրա, այլև խայտառակ պարտություն
կրեց նաև Իրաքում, որտեղ արաբ ազատասեր ժողովրդի «կոհակացած» ատե-
լությունը և բազմամյա պայքարը Նուրի Սաիդի պրո-իմպերիալիստական խրմ-
բակի դեմ, 1958 թ. հուլիսին հաղթանակով պսակվեցին։ Իմպերիալիզմի արա-
բական շղթայից մի օղակ ևս պոկվեց։ Սիրիայի և Լիբանանի հայ դեմոկրատ
բանաստեղծները հրճվանքով ողջունեցին «անցյալի կապանքները խորտակող»
և «գահավեժ անկումներու ուղիեն» դեպի «արաբական աշխարհի մայրական
գիրկը» Իրաքի վերադարձը։ Նրանց հրճվանքը՝ անխառն ուրախությունն էր
Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորության, որ արաբ ժողովրդի հետ այն-
քան երկար սպասել էր դարձի այդ օրը, «ինչպես մայրը իր զավակին», հետե-
վելով իրաքցի հայրենասերների մաքառումներին, հպարտանալով նրանց հաղ-
թանակներով և նույնիսկ արտասվելով, երբ նրանց «զարկին խուլթե խուլթ»։
Սիրիահայ և Լիբանանահայ դեմոկրատ մտավորականությունը լավ էր հասկա-
նում, որ Իրաքի կորստով «հովազներ մարդակերպ կկատղին մոլեգին» և «ար-
նախում բորենիններ այսօրուան ատելության մաղձն իրենց վառողածին» կը-
ժայթքեն շուտով, բայց և ապահովվում էր այն հավատքով, որ ժողովուրդը չի
վարանի իր հաղթական հեղափոխությունը պաշտպանելու²⁹։ Բանաստեղծ Գ. Ադ-
դարյանը՝ «Իրաքը հին, նոր է այսօր, կենսանորոգ ու հզոր, արաբական Արևելքի
տղան է ան հրաշյա», երգում էր խնդությամբ³⁰։ Նրան ձայնակցում էր երիտա-
սարդ Մոմճյանը, ողջունելով «ահեղ երկունքից» հետո Իրաքի «խավար» հորի-
զոնում ազատության արշալույսի ջինջ շողերը³¹։

Եվ ահա, ժողովրդային ընդվզումի ահարկու ալիքից սահմոկած, իրենց
վերջին խամաճիկներից մեկին փրկելու մտահոգությամբ, «գաղութակալ արնոտ
գայլերը վար կնետեն իրենց դիմակները։ Յանքինները Պեյրութ են», Լիբանանի
ժողովուրդը զեն ի ձեռին ոտի կանգնեց, «պատերազմի վառողին կապված
պատրույգին առջև հրախաղի ելած՝ ծախված Շամունի, ատված Շամունի դեմ»։

26 Մ. Գ ու շ ա զ յ ա ն, Սուրիա (ժերկիր», 1957 թ. հեկտեմբեր, էջ 30)։

27 Թ. Թ ո ռ ա ն յ ա ն, Երկու պատկեր (ՏՀառաջ», 22—12—1957)։

28 Ս. Փ ա ն ո ս յ ա ն, Սուրիան դյուրավ կլվեիք պատառ չէ (ՏՀառաջ», 15—12—1957)։

29 Ն. Շ ա հ ե ն, Կողջունեմ դարձդ Իրաք (ժերկիր», 1958, Գ հտ., էջ 9—10)։

30 Գ. Ա դ դ ա ռ յ ա ն, Իրաքյան շեփոր (Մեր նշանարանն է հառաջ», 3—8—1958, էջ 4)։

31 Մ. Մ ո մ ճ յ ա ն, Իրաքի հանրապետության (Արարատ դրսկան», 1958, № 8—10, էջ 14)։

Լիբանանցի արաբների կողքին կռվեցին և հայ աշխատավորները՝ Սիրիայում ևս հայերը սկսեցին զինվել, օգնության ձեռք երկարելու համար մայրիների երկրի իրենց հարազատներին³²։

«Պիտի հաղթենք», — հսկատեղով ու վճռականությամբ լի այս խոսքերը երկաթյա կարգախոսի նման հոսեցին դեմոկրատ հայ բանաստեղծների գրչից։ «Պիտի հաղթենք» երգեց Գ. Աղզարյանը³³, իր «սրտով ու երգով» ժողովրդի հաղթանակը դրվատեց Մ. Մոմճյանը³⁴։ Լիբանանում յանկիների դեմ կռվող հայ մարտիկներին խանդավառորեն գովերգեց Թ. Թորանյանը՝ նրանց Հայաստանի «սահմանապահ» անվանելով³⁵։ «Մահ բռնակալներուն» լողունգով, «հայ և արաբ ժողովուրդներուն պայքարը, միասնական կռիվը հաղթանակի կառաջնորդե ժողովուրդը», գրեց Հ. Գանդրունին³⁶։

Ինչ խոսք, որ արաբ ժողովուրդները հակաիմպերիալիստական իրենց պայքարում կարևոր հաղթանակներ արձանագրեցին։ Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախները իրենց համեստ բաժինն ունեցան այդ հաղթանակների ձեռք բերման գործում։

Ինչ խոսք նաև, որ Սիրիայի ու Լիբանանի հայ գաղթօջախների քաղաքացիական արի ու առողջ կեցվածքը ամրապնդելու ձգտող և ընդհակառակն այդ կեցվածքը հօգուտ իմպերիալիզմի քայքայելու հետամտող զույգ հոսանքներից հաղթանակը օրինաշարիորեն վիճակվեց առաջինին՝ հայ դեմոկրատ գրական գործիչներին, որոնք հարազատորեն արտացոլելով Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի մեջ ներգրավված հայ աշխատավորության ձգտումներն ու երազանքները, իրենց արաբ գրչեղբայրների հետ սերտ համագործակցությամբ և վերջիններիս գրական զինանոցի լավագույն տարրերի օգտագործումով, արդարացրին հայերի նկատմամբ արաբ ժողովուրդների տածած խոր վստահությունը և ամրապնդեցին հայ և արաբական մշակույթների առողջ թևերի կապն ու դաշինքը։

32 Գ. Գ ա ո յ ա ն, Շարքերն հզոր խաղաղության ուժերուն («Երկիր», 1958, հատ. Գ, էջ 6)։

33 Գ. Ա ղ զ ար յ ա ն, Պիտի հաղթենք («Հառաջ», 29—6—1958)։

34 Մ. Մ ո մ ճ յ ա ն, Երգ մարտի ու պայքարի («Արարատ գրական», 1958, № 5—6—7, էջ 47)։

35 Թ. Թ ո ռ ա ն յ ա ն, Դուք զինվորներ հայրենի («Երկիր», 1958, Գ հատոր, էջ 6)։

36 Հ. Գ ա ն զ ր ու ն ի, Բռնակալին անկումը («Արարատ գրական», 1959, № 3—9—10, էջ 11)։